ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ
ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF
THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE FOR INFORMATICS AND AUTOMATION
PROBLEMS

Հայաստանի Հանրապետություն,
0014, Երևան, Պ. Սևակի պող., 1,
Հեռ. (+37410) 282030, ֆաքս: (+37410) 282050
e-mail: iiap@sci.am

1, P. Sevak str., Yerevan, 0014,
Republic of Armenia
Tel. (+37410) 282030, fax: (+37410) 282050
e-mail: iiap@sci.am

2432-236
4.09.2014

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ծառայություն: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԻԱՊԻ-ՇՀԾՁԲ-11/2-14/11»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ ք.Երևան, Պ.Սևակի 1 սենյակ 415, ոչ ուշ քան 2014թ. սեպտեմբերի 8-ը, ժամը 12:00-ը:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գնումների համակարգող Հ.Դալլաքյան (հեռ. 010568531):

Գնման առարկայի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար զանգահարել՝ Ա. Պետրոսյանին (հեռ. 060 6235555):

Հայտերը կբացվեն «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ում, ք. Երևան, Պ.Սևակի 1 սենյակ 414 հասցեում 2014թ. սեպտեմբերի 8-ին, ժամը 12:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար ավիաասպասարկման ծառայությունների ձեռքբերումը:

ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ ավիաասպասարկման (որը կազմված է 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ hasmik_dallakyan@ipia.sci.am

Հարգանքով՝

Վ. Սահակյան,
տնօրեն